

Հաստատում եմ՝

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ

N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Տնօրեն՝----- Մ. Պ. Քուշկյան

<----->> 2023թ.

## ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

դասարան՝   V ա  

դասղեկ՝   Նազարյան Լիանա

## 2023-2024 ուստարի

### ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

V ա դասարանը տարին սկսել է -29- աշակերտով՝ -11- տղա, -18- աղջիկ: Դասարանում ձևավորվել է կարգապահական, կազմակերպված, ազնիվ և ընկերասեր երեխաների խումբ: Մեծամասնությունը աշխատասեր է, ցուցաբերում են գերազանց առաջադիմություն, հետաքրքրասեր են:

Դասարանում գերազանց են սովորում-----աշակերտ՝ ---- տղա, ----- աղջիկ: Հարվածային են սովորում-----աշակերտ: Հաճախ առաջադիմություն ունեցողները օգնում են դժվարություն ունեցող դասընկերներին: Դասարանում տիրում է համերաշխ, առողջ ընկերասիրական մթնոլորտ: Յուրաքանչյուրը ազատորեն կարող է արտահայտել իր կարծիքը, հարգելով աշակերտական կարգապահությունը:

Երեխաների հարաբերությունները հիմնված են փոխադարձ սիրո ու հարգանքի վրա:

#### 2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

1. Ծանոթացում աշակերտների հետ, նրանց նախասիրություններին, հետաքրքրություններին:

2. Ծանոթացում միջին դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներին, դպրոցի նոր մասնաշենքի պայմաններին

3. Դասարանի ավագի ու օգնականի ընտրություն:

4. Դասարանի ակտիվի ընտրություն ( աշակերտներ, որոնք կազմակերպում են դպրոցում իրենց հանձնարարված առաջադրանքները և լուծում են դասարանում եղած խնդիրները ):

5. Դասարանական աշխատանքի համակարգում:

6. Հերթապահության սահմանում, դասարանի մաքրության ապահովում:

7. Վերահսկողություն աշակերտական հագուստի նկատմամբ, զրույց ծնողների և աշակերտների հետ:

8. Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացին:

9. Ձևավորել աշակերտների, ուսուցիչների և ծնողների միջև ներդաշնակ փոխհարաբերություններ:

10. Ձևավորել և կատարելագործել աշակերտների ինչպես ստեղծագործական, այնպես էլ սոցիալական ունակությունների զարգացումը (լսելու, դիտարկելու, խմբային

---

քննարկելու):

---

11. Ուշադրություն դարձնել սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը:

---

12. Այցելություն մշակութային, պատմական, ուսումնա-դաստիարակչական մի շարք ուսումնական հաստատություններ:

---

### 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայեցի դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, ուստի առաջին հերթին այն պետք է իրականացնել լիարժեք կրթությամբ:

#### 3.1 Հոգևոր դաստիարակություն

---

1. Հոգևոր դաստիարակության և զարգացման ընթացքը պայմանավորված է մի շարք գործոններով՝ ընտանիք, փողոց, շրջապատող հասարակություն և, իհարկե, դաստիարակության մեթոդի ընտրություն:

---

2. Հոգևոր դաստիարակության մեթոդով առաջնորդվելով՝ դպրոցի և դասղեկի առաքելությունը այսօր երեխայի մեջ մարդու և շրջապատի հանդեպ սեր ու հարգանք ձևավորելն է:

---

3. Դասղեկի, ինչպես նաև «Իմ հայրենիքը» առարկայի դասաժամերն արդյունավետ օգտագործել նաև երեխաների հետ զրույցների, տարբեր օրինակների միջոցով բարձրացնել հոգևոր-դաստիարակության տարբեր չափանիշներ՝ ազնվություն, հարգանք մեծահասակների, ծնողի հանդեպ, լինել քաջասիրտ, հանդուրժող, աշխատասեր, պատասխանատու:

---

#### 3.2 Գեղագիտական դաստիարակություն

---

1. Երեխաների գեղագիտական դաստիարակությունը նպաստում են հետաքրքիր և ճանաչողական դասերը, ինչպես նաև տարաբնույթ էքսկուրսիաները:

---

2. Անհրաժեշտ է էքսկուրսիաների ժամանակ սովորեցնել դիտել շրջապատի բոլոր երևույթները, եզրահանգումներ անել, բանավիճել:

---

3. Գեղագիտական դաստիարակությանը շատ նպաստում է նաև գրական հերոսների կերպարային համակարգի վերլուծությունները, մշակութային գործիչների ստեղծագործությունների ու նրանց կյանքի պատմությունների մասին զրույցները,:

---

4.Նախագծային ու ստեղծագործական տարբեր աշխատանքներ:

---

5.Այցելություն պատկերասրահներ և մշակութային այլ վայրեր:

---

### 3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

---

1.Դպրոցն այն տեղն ու միջավայրն է, որտեղ տարբեր տարիքի երեխաները պետք է ստանան պատշաճ ռազմա-հայրենասիրական դաստիարակություն:

---

2.Տարբեր ուսումնական առարկաների՝ Մայրենի, Իմ հայրենիքը, Բնություն և այլն, օգնությամբ ձևավորել երեխաների մոտ պատկերացում սեփական հայրենիքի, հայրենիքի պաշտպանության, հայրենասիրության դրսևորումների մասին:

---

3.Կարևոր է զանազան թեմաներով զրույցներն անկախության, դրա անհրաժեշտության և պահպանման մասին:

---

4.Անցյալի հերոսական պատումներով, հայրենիքի համար իրենց կյանքը նվիրած հերոսների մասին տեղեկությունները բարձրացնել երեխաների մոտ հայրենիքի պաշտպանության ու ամրապնդման գաղափարը:

---

5.Բացատրել նաև, որ սեփական բակն ու շրջակայքը ևս հայրենիքի մի մասնիկն են, ուստի հարկավոր է հոգ տանել, մաքուր պահել և խնամել այդ փոքրիկ հատվածները:

---

### 3.4 Ֆիզիկական դաստիարակություն

---

1. Ֆիզիկական դաստիարակությունը չափազանց կարևոր է դպրոցական տարիքի երեխաների համար, քանի որ նրանք ֆիզոլոգիապես ձևավորվում և հասունանում են հանց ուսումնական տարիների ընթացքում:

---

2.Դրանով հանդերձ, ֆիզիկական դաստիարակությունն ապահովում է երեխայի առողջ ապրելակերպը, ուստի հաճախակի զրույցներով, սպորտային միջոցառումների տեսանյութերի դիտումով սեր և հետաքրքրություն առաջացնել նրանց մոտ տարբեր սպորտաձևերի հանդեպ:

---

3.Ոգևորել և խրախուսել տարբեր սպորտաձևերին երեխաների մասնակցությունը:

---

4.Կարևոր է սպորտի միջոցով նաև երեխաների հոգևոր դաստիարակությունը կազմակերպել, բացատրել, թե ինչպես ընդունել հաղթանակն ու պարտությունը: Չմեծամտանալ հաջողություններից ու չընկճվել անհաջողություններից:

---

5.Դասուղեկի դասաժամերի ընթացքում զրույցներ կազմակերպել տարբեր մարզիկների մասին, ինչը կարող է նպաստել երեխաների ընդհանուր զարգացվածության բարձրացմանն, ինչպես նաև հայրենի մարզիկներին ճանաչելու միջոցով նաև հայրենասիրության մեծացմանը:

---

6. Բացի այդ ամենից հաճախ սպորտը կարող է օգնել՝ ձերբազատվել վնասակար սովորույթներից, գիտակցել բնական ու օգտակար սննդի օգտագործման կարևորությունը, երեխաներին բացատրել այդ ամենի նշանակությունը:

---

### 3.5 Աշխատանքային դաստիարակություն

---

1. Շատ կարևոր է երեխայի մեջ սերմանել պատասխանատվություն սեփական պարտականությունների նկատմամբ և դրական վերաբերմունք ցուցաբերելը ցանկացած

---

---

աշխատանքի հանդեպ:

---

2. Զրույցներ ու աշխատանքնային տարբեր օրինակների միջոցով բացատրել երեխաների համար սովորելու հանդեպ աշխատասիրության կարևորությունը:

---

3. Մատնանշել աշխատքի դերն ընտանիքում, հասարակության կյանքում, աշխատանքի անհրաժեշտությունը, ինչով է կարևոր սեր աշխատանքի նկատմամբ:

---

4. Երեխաներին սովորեցնել գնահատել բոլոր աշխատանքները, հասկանել ու գիտակցել, որ լավ կամ վատ աշխատանք չկա, յուրաքանչյուրն ունի աշխատանքի կարիք, հարգանք ձևավորել ցանկացած աշխատանքի՝ ֆիզիկական, մտավոր, բարձր և ցածր վարձատրվող և այլն, հանդեպ:

---

4. Հատկապես երեխաներին սովորեցնել ձգտել աշխատել թե տանը, թե դպրոցում, լինել աշխատասեր:

---

### 3.6 Բնապահպանական դաստիարակություն

---

1. Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:

---

2. Երեխաների մոտ ձևավորել պատասխանատվության զգացում շրջակա միջավայրի, բնության ամեն մասնիկի նկատմամբ, երեխան կարողանա գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական շեղումները, այդ հմտությունները փոխանցել իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին:

---

3. Սերմանել պատասխանատվության զգացում սեփական բակի, դպրոցի, փողոցի և բնության գրկում ակտիվ հանգստի ժամանակ մաքրության պահպանման, հետևողական վերաբերմունք այդ ամենին:

---

4. Կարևորել համադպրոցական կամ համաբակային մաքրության համար կազմակերպվող աշխատանքները, ակտիվ մասնակցությունն այդ շաբաթոյակներին, կամ նախաձեռնողականություն ցուցաբերել նման միջոցառումների համար:

---

### 4. Դպրոց-ընտանիք կապը

---

1. Երեխայի մտավոր և ֆիզիկական զարգացման, ինչպես նաև անհատ, քաղաքացի, հասարակության լիիրավ անդամ ձևավորվելու ու դառնալու գործում շատ կարևոր է դպրոց-ընթանիք փոխհարաբերությունները:

---

2. Երեխաներին հատկապես բացատրել այդ փոխհարաբերությունների ու կապի անհրաժեշտությունը, որպեսզի գիտակցեն և դպրոցի և ընտանիքի դերն իրենց կյանքում:

---

3. Արժևորել դպրոց-ընտանիք փոխհարաբերություններում առողջ մթնոլորտի դերը, հարգանքը միմյանց նկատմամբ, և հատկապես փոխադարձ վստահությունը տարբեր բնագավառներում:

---

4. Դասղեկի աշխատանքի գլխավոր բաղկացուցիչ մասն է նաև երեխաների ընտանեկան կարգավիճակին տեղյակ լինելը, համագործակցելը ընտանեկան լարված հարաբերությունների ժամանակ երեխայի շահերի պաշտպանության հարցում և

---

զանազան այլ խնդիրների դեպքում:

**ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Առաջին կիսամյակ**

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարողներ
1-ին շաբաթ	Դասասենյակի նախապատրաստում նոր ուսումնական տարվան: Աշակերտների հաշվառում: Դասագրքերի բաշխում:	01.09-08.09	դասղեկ, աշակերտներ, ծնողներ
2-րդ շաբաթ	Հերթապահության սահմանում, դասղեկի ժամի ընտրություն: Դասարանի ավագի ընտրություն:	11.09-15.09	դասղեկ, աշակերտներ
3-րդ շաբաթ	Ծնողական ժողով: Ծնողխորհրդի կազմի ընտրություն:	18.09-22.09	դասղեկ, ծնողներ, փոխտնօրեններ
4-րդ շաբաթ	Կարգապահական հարցերի քննարկում:	25.09-29.09	դասղեկ, ծնողներ, աշակերտներ
5-րդ շաբաթ	«Ո՞վ է ուսուցիչը» զրույց-քննարկում: Ուսուցչի դերը մեր կյանքում:	02.10-06.10	դասղեկ, աշակերտներ, ուսուցիչներ
6-րդ շաբաթ	«Ինչո՞ւ եմ ես հաճախում դպրոց» թեմայով:	09.10-13.10	դասղեկ, աշակերտներ
7-րդ շաբաթ	«Աշխատանքի դերը երեխայի կյանքում» թեմայով զրույց	16.10-20.10	դասղեկ, աշակերտներ
8-րդ շաբաթ	«Ուսումն ու աշխատասիրությունը փախկապակցված են արդյոք», թեմաների անդրադարձ	30.10.03.11	դասղեկ, աշակերտներ, ուսուցիչներ
9-րդ շաբաթ	Գեղագիտական դաստիարակության նպատակով այցելություն «Մանկական պատկերասրահ»	06.11-10.11	դասղեկ, աշակերտներ, ծնողներ
10-րդ շաբաթ	Դասալսումներ տարբեր առարկաներից:	13.11-17.11	դասղեկ, աշակերտներ, ուսուցիչներ
11-րդ շաբաթ	Դասալսումների արդյունքների քննարկումներ:	20.11-24.11	դասղեկ, աշակերտներ, ծնողներ
12-րդ շաբաթ	«Մպորտը և նրա դերը երեխայի	27.11-01.12	դասղեկ, աշակ

	կյանքում» թեմայի անդրադարձ		երտներ
13-րդ շաբաթ	«Ինչ գիտենք հայ մարզիկների մասին» քննարկում	04.12-08.12	դասղեկ,աշակերտներ
14-րդ շաբաթ	Դասարանի ամանորյա ձևավորում: Ամանորյա երազանքներ:	11.12-15.12	դասղեկ,աշակերտներ,ծնողներ
15-րդ շաբաթ	1-ին կիսամյակի արդյունքների քննարկում, ամփոփում:	18.12-22.12	դասղեկ,աշակերտներ, ծնողներ,ուսուցիչներ

**ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
Երկրորդ կիսամյակ**

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարողներ
16-րդ շաբաթ	«Առողջ ապրելակերպի կազմակերպում» թեմայի շուրջ զրույցներ	08.01-12.01	դասղեկ,աշակերտներ
17-րդ շաբաթ	«Ընկերասիրություն, հանդուրժողականություն, հոգատարություն» թեմային անդրադարձ	15.01-19.01	դասղեկ, աշակերտներ
18-րդ շաբաթ	Հայոց բանակ, մեր հայրենիքի պաշտպան	22.01-26.01	դասղեկ,աշակերտներ, ծնողներ
19-րդ շաբաթ	«Կարգապահությունը և բանակը», կարևորությունը և դերը	29.01-02.02	դասղեկ,աշակերտներ,
20-րդ շաբաթ	Գրքի դերը իմ կյանքում.քննարկում	05.02-09.02	դասղեկ,աշակերտներ
21-րդ շաբաթ	Թումանյան.գիրք նվիրելու օր, սեփան գիրքը ստեղծել	12.02-16.02	դասղեկ,աշակերտներ, ծնողներ
22-րդ շաբաթ	Մայրենիի օր: «Մեր լեզուն, մեր զենքն է» քննարկում:	19.02-23.02	դասղեկ,աշակերտներ,ուսուցիչներ
23-րդ շաբաթ	Ազգային սովորություններ: Եկեղեցական տոներ:	26.02-01.03	դասղեկ,ուսուցիչներ,աշակերտներ
24-րդ շաբաթ	Մայրություն և գեղեցկություն: Տոնի խորհուրդը	04.03-07.03	դասղեկ,աշակերտներ
25-րդ շաբաթ	«Բնությունը խնամքի կարիք ունի»:	11.03-15.03	դասղեկ,







**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,  
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ**

համար	նախասիրական- առարկայական խմբակ	գեղարվեստական- երաժշտական խմբակներ	մարզական խմբակներ	այլ խմբակներ
1				
2		պար		
3				
4				
5				
6				
7				
8		պար		
9				
10				
11		պար		
12			Ֆուտբոլ, շախմատ	
13		պար		
14				
15				
16		պար		
17			Ֆուտբոլ	
18			ֆուտբոլ	
19		պար		
20				
21		կերպարվեստ		
22		պար, դաշնամուր		
23		պար		
24				
25		կերպարվեստ	Գեղարվեստ ական մարմնամար զույթյուն	
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				
34				
35				

**ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ**

անցկացման օրը	դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
07.09.2023	Զրույց-ծանոթացում՝ «Ով եմ ես, իմ նախասիրությունները»	
14.09	Զրույց-քննարկում, «գիտելիքի կարևորությունը, ուժը»	
28.09	Քննարկում՝ «Անկախության արժեքը»	
28.09	Խոնարհման դասեր՝ նվիրված 44 օրյա պատերազմին	
04.10	Քրույց-քննարկում «Խաղաղության նշանակությունը»	
11.10	Քննարկում՝ «Արդյո՞ք պատասխանատու եմ իմ արարքների համար»	
18.10	Գրքերի աշխարհում	
01.11	Զրույց արվեստի մասին	
08.11	Մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում	
15.11	Զրույց ընկերասիրության մասին	
22.11	Քննարկում «Մեր ազգային սովորույթները»	
29.11	Զրույց «Մեր հայրենիքի տեղսարժան վայրերը»	
06.12	Ինչպես պաշտպանվել բնական աղետներից	
13.12	Պատիվ ունեն լինելու Ա. Միկոյանի հետնորդը	
20.12	Ամփոփում ենք 2023 թ.	
10.01.2024	Զրույց «Ինչ եմ ուզում իրականացնել 2024 թ.»	
17.01	Քննարկում՝ «Ազնվությունն ու բարեկրթությունը կարևոր են մեր կյանքում»	
24.01	Հայրենիքի պաշտպանները երեկ, այսօր, վաղը	
31.01	Զրույց-քննարկում՝ «Եղանակային փոփոխությունների նշանակությունը երեխաների օրգանիզմի համար»	
07.02	Զրույց՝ «Մեր լեզուն մեր զենքն է»	
14.02	Զրույց՝ «Ինչ գիտեմ ազգային տոների մասին»	
21.02	Առողջ ապրելակերպի սկզբունքները	
28.02	Քննարկում՝ «Գարունը նոր կյանքի սկիզբ. Համաձայն եմ, թե ոչ»	
06.03	Զրույց-քննարկում «Ինչե՞ս անել, որ մայրիկները միշտ ժպտան»	
13.03	Բարեկիրթ վարվեցողության կանոնները	
20.03	Զրոսանք բնության գրկում	
03.04	Զրույց-քննարկում՝ « Ինչու է կարևոր պահպանել մաքրություն»	
10.04	Արդյոք լավ գիտեմ իմ իրավունքներն ու պարտականությունները	
17.04	«Ինչպես օգտագործել թափոնները»	
08.05	Ուժի, փառքի և անմահության մասին	
15.05	Զրույց «Արդարացրե՞մ եմ իմ սպասելիքները»	
22.05	Ամփոփում 2023-2024 ուսումնական տարին	




**ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ**

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ժողովի համառոտ բովանդակությունը	ծանոթություն
06. 09. 2023	1. Հանրակրթական պետական նոր չափորոշիչի ներկայացում:	Դպրոցի տնօրենը ներկայացրեց 2023-2024 ուս. տարվա V դասարանների ՀՊԶ, դասագրքերի վերաբերյալ տեղեկատվություն	
	2. 2023-2024 ուս. տարվա աշխատանքային պլանի քննարկում	Դատելը ներկայացրեց 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանը և այն հաստատվեց	
	3. Ծնողական կոմիտեի կազմի և նախագահի ընտրություն	Ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Զատիկյան Հասմիկը, իսկ անդամներ՝ Անդրեյան Միրանուշը, Մխիթարյան Մարոն և Հակոբջանյան Մարգարիտան	
	4. Ընթացիկ հարցեր	Քննարկվեցին 5-րդ դասարան փոխադրման հետ կապված աշակերտների մոտ առաջացող հնարավոր խնդիրների, բարդությունների մասին, նոր ուսումնասիրվող առարկաների, կարգապահական հարցեր, դասերից	





**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ**

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակությունը	ծանոթություն
31.08. 2023	Արձակուրդից հետո դասարանը նախապատրաստել առաջին ուսումնական օրվան:	Աշխատանքներ դասասենյակի ձևավորման, երեխաներին անակնկալներ պատրաստելու ուղղությամբ	

**ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ**

(ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների համառոտ ամփոփում և  
վերլուծություն)

---

---

---

---

---



---



---



---



---



---



---



---



---



---



---



---



---



---



---



---



---

**ՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ամիս, ամսաթիվ	կատարված աշխատանքների բնութագիրը (խրախուսանքներ, դիտողություններ) և նշումների բովանդակությունը	նշումները կատարեց

